

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն ԹԻՎ 2

Վանաձորի համայնքի ավագանու արտահերթ նիստի՝ կայացած 11.02.2014թ.

Համայնքի ավագանու արտահերթ նիստը հրավիրվել էր համայնքի ավագանու անդամների օրենքով սահմանված թվի մեկ երրորդի նախաձեռնությամբ:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Ս.Դարբինյանը:

Մասնակցում էին ավագանու անդամներ՝ Գ.Քալանթարյանը, Գ.Շահինյանը, Ա.Հարությունյանը, Ս.Աղաբեկյանը, Վ.Դոխոյանը, Ա.Գրիգորյանը, Ա.Օհանյանը, Ա.Մատինյանը, Վ.Դավիթավյանը, Ա.Խաչատրյանը, Խ.Վարդանյանը, Գ.Բաղյանը, Ս.Ղամբարյանը, Ա.Ափինյանը, Կ.Պառավյանը, Դ.Սիմոնյանը, Ա.Փելեշյանը:

Հարգելի պատճառով նիստից բացակայում էին ավագանու անդամներ Հ.Մովսիսյանը, Ս.Հակոբյանը:

Անհարգելի պատճառով նիստից բացակայում էր ավագանու անդամ Ա.Այվազյանը:

Նիստին մասնակցում էին նաև Ն.Սարգսյանը, Գ.Սիմոնյանը, Հ.Մատինյանը, Հ.Դավթյանը, Ս.Մարտիրոսյանը, Մ.Գալստյանը, ՋԼՄ-ների ներկայացուցիչներ:

Ավագանու անդամ Վ.Դոխոյանը հիմնավորելով, որ քննարկվող հարցը վերաբերում է նաև ավագանուն, առաջարկեց քվեարկել նիստը դռնփակ անցկացնելու հարցը:

Քվեարկությամբ՝ կողմ՝ 15, ձեռնպահ՝ 2 (Խ.Վարդանյան, Ա.Խաչատրյան) առաջարկությունն ընդունվեց, որից հետո ՋԼՄ-ների ներկայացուցիչները դուրս եկան դահլիճից:

Միաձայն քվեարկությամբ նիստն սկսվեց:

Այնուհետև ներկայացվեց նիստի օրակարգը:

Միաձայն կողմ քվեարկությամբ հաստատվեց հետևյալ օրակարգը:

Օր ա կ ա ղ

1. ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ ԼԴ/0565/02/09 վճիռը վերաքննության կարգով բողոքարկելու մասին

զեկ.՝ Ս.Մարտիրոսյան
Մ.Գալստյան

- 1.ԼՍԵՑԻՆ - ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ ԼԴ/0565/02/09 վճիռը վերաքննության կարգով բողոքարկելու մասին

զեկ.՝ Ս.Մարտիրոսյան
Մ.Գալստյան

Հարցի քննարկման ժամանակ ավագանու անդամներն առաջարկեցին քաղաքապետին վերացնել քաղաքապետի որոշումը, որի հիման վրա կնքվել է հաշտության համաձայնություն: Քաղաքապետը տեղեկացրեց, որ հաշտության համաձայնությունը հաստատված է օրինական ուժի մեջ մտած վճռով:

Հարցի շուրջ ծավալված մտքերի փոխանակմանը մասնակցեցին Գ.Քալանթարյանը, Ս.Աղաբեկյանը, Վ.Դոխոյանը, Ա.Հարությունյանը, Ա.Գրիգորյանը, Կ.Պառավյանը, Ա.Օհանյանը, Ա.Մատինյանը, Ա.Ափինյանը, Վ.Դավիթավյանը, Դ.Սիմոնյանը, Ա.Խաչատրյանը, Գ.Բաղյանը, Խ.Վարդանյանը:

Քննարկման ընթացքում ավագանու անդամները առաջարկեցին նախագծի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Լիազորել ավագանու անդամ Վահե Դոխոյանին՝ վերալիազորման իրավունքով ներկայացնելու Վանաձորի համայնքի ավագանու շահերը:»:

Բարձրացված հարցերին տրվեցին սպառիչ պարզաբանումներ:

Առաջարկվեց քվեարկել օրակարգի հարցը:

Քվեարկության պահին ներկա չէին ավագանու անդամներ Ա.Փելեշյանը, Ա.Խաչատրյանը:

Ավագանու անդամ Գ.Շահինյանը չմասնակցեց քվեարկությանը:

Քվեարկությամբ՝ կողմ՝ 14, ընդունվեց որոշում /որոշումը կցվում է/:

Նիստն ավարտվեց:

Ավագանու անդամներ՝

- ԳԱՅԱՆԵ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ
- ՍԵՅՐԱՆ ԱՂԱԲԵԿՅԱՆ
- ԱԼԵՔՍԱՆԴՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
- ՍԵՅՐԱՆ ՂԱՄԲԱՐՅԱՆ
- ԳԵՎՈՐԳ ՇԱՀԻՆՅԱՆ
- ԿԱՐԵՆ ՊԱՌԱՎՅԱՆ
- ՎԱՀԵ ԴՈՒՆՅԱՆ
- ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ
- ԱՐՏՅՈՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ
- ԱՐԹՈՒՐ ՕՀԱՆՅԱՆ
- ԱՐՄԵՆ ՄԱՏԻՆՅԱՆ
- ՎԱՀԱԳՆ ԴԱՎԻԹԱՎՅԱՆ
- ԱՐԱՄ ԽԱԶԱՏՐՅԱՆ
- ԳՈՌ ԲԱԴՅԱՆ
- ԽՈՐԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
- ԴԱՎԻԹ ՍԻՄՈՆՅԱՆ
- ԱՐՄԱՆ ԱՓԻՆՅԱՆ

Համայնքի ղեկավար՝
ՍԱՄՎԵԼ ԴԱՐԲԻՆՅԱՆ _____

Նիստն արձանագրեց Հովհաննես Մատինյանը _____